ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 5, 1956 Общественные науки

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՎԱՐՉԱ-ՏԵՐԻՏՈՐԻԱԼ ԲԱԺԱՆՈՒՄԸ

«Հայկական ՍՍՌ վարչա-տերիտորիալ բաժանում» տեղեկագիրը պատրաստված է Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի ինֆորմացիոն-վիճակագրական բաժնի կողմից և լույս է տեսել Հայպետհրատի հրատարակությամբ, նույնօրինակ բովանդակությամբ երկու լեզվով՝ հայերեն և ռուսերեն։

Տեղեկագրի մեջ տրված են տեղեկություններ Հայկական ՍՍՌ տարածության և բնակչության մասին, նրա կազմվելու և ՍՍՌՄ կազմի մեջ մտնելու ժամանակի, բնակավայրերի զանազան տիպերի, 31 վարչական շրջանների ու նրանց կենտրոնների հեռավորության մասին Երևանից ու մոտակա երկաթուղային կայանից և այլն։

Մենք այժմ ունենք երեքական ենթակայության քաղաքներ՝ Երևան, Լենինական և Կիրովական։ Բացի այդ, Հայկական ՍՍՌ-ում այժմ կա ռայոնական ենթակայության ինը քաղաք, այն է՝ Ալավերդին, Արթիկը, Գորիսը, Դիլիջանը, Էջմիածինը, Հոկտեմբերյանը, Ղափանը, Նոր Բայազետը և Ստեփանավանը։

Տեղեկագրի առաջին հրատարակության համեմատ նախկին 8 քաղաքատիպ ավանների փոխարեն ռեսպուբլիկայում այժմ գոյություն ունի 21. Նոր քաղաքատիպ ավաններ են դարձել Ագարակը (Մեղրու շրջանում), Ախթալան, Ախտան, Արզնին, Դաստակերտը, Թումանյանը, Նոր Կյանքը, Ջերմուկը, Սովետաշենը, Սպիտակը և այլն։

Տեղեկագրի վերջում կցված են այբբենական կարգով կազմված՝ Գյուղական Սովետների, գյուղական բնակավայրերի՝ այժմյան և նախկին անունների ցուցակները։

Հայկական ՍՍՌ վարչա-տերիտորիալ բաժանման տեղեկագրի 2-րդ հրատարակությունը լույս է տեսել շատ ավելի բարեկարգ վիճակում, ընկ. Ն. Ադամյանի խմբագրությամբ։

Այս անգամ նկատի են առնված 1-ին հրատարակության [1948 թ.] վերաբերյալ պարբերական մամուլում լույս տեսած դիտողությունները։ Պետք է նշել, որ նման հրատարակությունները կազմողներից և խմբագրից պահանջում են խոշոր և մանրակրկիտ աշխատանք։

Սակայն այդ երկրորդ հրատարակության մեջ ևս սպրդել են սակավաթիվ սխալներ և առաջացել մի քանի թյուրիմացություններ, որոնց վրա անհրաժեշտ ենք համարում կանգ առնել։

Սովետական Հայաստանի տերիտորիան 7-րդ էջում նշված է ճիշտ՝ 29,8 հազ. քառ. կմ, իսկ 9, նաև 10—73 էջերում տպագրված՝ շրջանների տարածության գումարը ավելի պակաս է։ Եթե այդ վերջին թվին ավելացնենք Սևանա լճի մակերեսի լրիվ տարածության թիվը, կրկին պակաս է մնում։ Նույն թերությունը դիտում ենք նաև ռուսերեն տեքստում։

Անունների այբբենական ցուցակներում նկատվում են հերթականության մասնակի խախտումներ. օրինակ, քաղաքատիպ բնակավայրերի շարքում Սևանը նշված է Սովետաշենից և Սպիտակից հետո։ Շրջանների ցուցակում, Ապարանի շրջանի Արագած գյուղի անունը նշված է Ափնա գյուղից հետո. Կոտայքի շրջանի Արամուսը նշված է Առինջից առաջ։ Գյուղական Սովետների տերիտորիայում գտնվող բնակավայրերի ցուցակում՝ Սիսիանի շրջանի Սիսիան գյուղը նշված է Սպանդարյան գյուղից հետո, բնակավայրերի ընդհանուր այբբենական ցուցակում «ղ» և «ս» տառերով անունների շարքում նկատվում են նման կարգի թերություններ։ Նույն-կարգի սխալներ սպրդել են նաև ռուսերեն տեքստում։

Ախտայի շրջանի Լուսավան քաղաքատիպ ավանի վերաբերյալ ոչինչ չի ասված, թե որտեղ է նա գտնվում. ընթերցողը ոչ մի կերպ չի կարող տեղեկանալ Տեղեկագրի ցուցակից։ Լուսավանը նորակառույց քաղաքատիպ ավաններից մեկն է։

Գյուղական Սովետների քանակը Հայկական ՍՍՌ 1948 թվականի վարչա-տերիտորիալ առաջին ցուցակում եղել է 711, ըստ ՍՍՌՄ վարչատերիտորիալ բաժանման 1954 թվականի հրատարակության՝ 675, իսկ ըստ Հայկական ՍՍՌ վարչա-տերիտորիալ բաժանման 1955 թ. հրատարակության՝ 440. ոչ մի բացատրություն չկա, թե ինչու է պակասել։

Ծանոթանալով Հայկական ՍՍՌ վարչա-տերիտորիալ բաժանման մեջ թվարկված բնակավայրերի ցուցակի հետ, նկատում ենք, որ Ծաղկաշեն, Ջրաշեն և Սարալանջ անուններով Հայկական ՍՍՌ-ում կա 4-ական գյուղ. Ագարակ, Գետաշեն, Թազագյուղ անունով՝ 5-ական գյուղ.

իսկ Նորաշեն անունը կրում են 6 բնակավայրեր՝ Ապարանի, Արթիկի, Արտաշատի, Շամշադինի, Սևանի և Ստեփանավանի շրջաններում։

Անունների այդ կրկնությունը դժվարացնում է թե՛ փոստի և թե՛ քաղաքացիների փոստային առաքումների գործը։

Հիշյալ խնդիրը, ինչպես նաև դեռևս բնակավայրերի ցուցակում մնացած հայկական և ադրբեջանական գյուղերի վատահնչյուն անունները սպասում են իրենց լուծմանը Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի տառադարձական հանձնաժողովի կողմից։

ՀՍՍՌ վարչա-տերիտորիալ բաժանման Տեղեկագրի առաջին հրատարակությունը վաղուց սպառված էր. բացի այդ, այս 7 տարվա ընթացքում շատ անուններ հնացել և փոփոխվել են։

Նոր հրատարակության կարիքը խիստ զգացվում էր։ Այդ մեծապես անհրաժեշտ է շատերին՝ վարչական մարմիններին, պետական և տնտեսական կազմակերպություններին, դիտական և մանկավարժական հիմնարկներին, ինչպես նաև, առհասարակ, առանձին քաղաքացիներին։

Ողջունելի պետք է համարել Հայկական ՍՍՌ վարչա-տերիտորիալ բաժանման Տեղեկագրի 2-րդ հրատարակությունը։

ՀՈՎՀ. ՍՏԵՓԱՆՅԱՆ